

# ՕՐԵՓԻԼՈՒԹ

## ՀԱՅՐԵՆԵԱՑ

Ինչ որ խմեագրութեան և Տնօրէնութեան կը վերաբերի պէտք է ուզգել առ ՊԵՏՐՈՍ ԲՈՐԹՈՒՔԱՆ ԽԱՆ, Պալս Մերձանը Խամար - Ալ Խան, թիւ 4: — Անգամ համակ կամ ծրար կը մերժուի: Օրագիրն ան շաբթու հինգշաբթի օրերը կը հրատարակուի: Անցամնեայ շըշանին դինը 20 լուրունոց ուժան դժիմք ԿԱՆԽՈՒԿ վճարելի, ամէն թիւէ կրնան ստորագրուիլ: — Դուրս երթալիք Օրագրաց ճամբու ծափը առնողն պայ է: — Ծանուցնան առզեւ զորուշ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԻ ԿԸՆԴՈՒՆՎԱԿ. Կ. ՊՈԼԻՍ Օրագրոյս գրասենեակը: — Թիֆլով Մէծարդոյ Ավլքանդր աղա Երեցեան: — Զմիւռնիա Երշալուսոյ գրասենեակը: — Թէքիրաալ Պ. Թագւոր Ֆէսէն: — Կէյլէ, Օրթագիւլ, Ղընճըլար Պ. Խաշատուր Մանուկէնան: — Տրապիզոն Պ. Խաշատուր Էլմասէնան:

## ԵՐԱԳՐԾԻ

Ապրիլ 27 թուով Տրապիզոնէն զրուած նամակ մը ախուր լուրեր կը հաղորդէ մեզ: Գթութիւնը նոյն քալաքին մէջ դադրած չէ, եւ երթալով առաւել կը մեծնայ: Աղգային գործերը հսն երեսի վրայ մնացած անկախ կընթանան միշտ գալուցը վերջին առաջին բարեկարգութեան կարօտ, հասարակութեան իրաւունքը բոնաբարուած, բաց առնցմէ եւ որ ցատալին է, նախին առաջնորդը (Աբրահամ վարդապետը) ուզողներէն մէկ քանի հոգի դիշեր մը (զրուած չէ թէ որ օր է եզեր) ժամը մէկ ուկիսին միջոցները առաջնորդարան երթալով՝ վարչութեան կողմանէ առժամանակեայ քարտիչ պկուած կարսավեա վարդապետը գիշերով բանի: Գուրա կը հաննէ: Աբրահամ վարդապետին հակառակորդներէն ումանք այս եղել լութիւնը տեղական կառավարութեան իմաշնել փութալով՝ տեսչութեան զինուորներ կը հասնին իսկոյն, եւ 50 հոգւոյ շափ ձեռարակելով բանուը կը առնին, ուր այս եղելութեան վրայ հարցուփորձ ըլլալով՝ մէկ քանին իբրեւ անմեղ կարձակուին, բայց 10—15 հոգւոյ շափ տակաւին բանոնն են եղեր: Հոս վարմանալին առ է որ, այս մարդի կը տեսչութեան մատնողներուն խղճին դըպ-

չելով՝ Տեղապահ Մրիազանին եւ Վարչութեան խնդրագիր զրկեր են, որ միջամտութիւն ընելով այս մարդիկը բանտէն ապատելու հնարք մը գտնեն, վասն զի իրենք շատ աշխատեր են, բայց աշխատութիւննին յաջող արդիւնք մը չէ ունեցել:

Այս ժողովուրդին վիճակը յիրաւի շատ աւաղելի է: զրեթէ տարիէ աւելի է որ առաջնորդը կուզենք չենք ուզերի կոփութակը րած չէ մէշերնին: ցաւալի կըսենք, վասն զի Տրապիզոնի պէտրազմարդ քաղաք մը առաջնորդի մը համար այսչափ ժամանակէ ՚ի վեր տիսուր ունաւիսա դիրք մը բանած է:

Ըստ մեզ՝ տառաջնորդի մը համար այս շափ ժամանակ երկար վեճ յուզելը անտեղի է, եւ թէ այսչափ վեճ յուզելէն ի՞նչ չահ:

Մէկ քանի գաւառներէ աւ ցաւալի լութեր կը հասնին, խեղճ ժողովուրդը շարունակ կեղեքուելու և հարստութեանց ենթակայ: Ժամ առ ժամ իրենց երեսիուսանն ընտրելու կըսպասեն անհամբեր . . . :

Աստուած տա՛ր, որ խեղճերուն յուսացածին պէս ըլլար: Սպասենք վախճանը դիտելու:

Սահմանադրութեան գործադիր յանձնաժողովը շարունակ իր պաշտօնը կը վարէ և Ապրիլ 28 կիրակի օրը Դալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ խորհրդարանին մէջ նիստ մ'ալ ըրաւ, և մեծ փոյթունի Ասհմանադրութեան գործադրութիւնը օր առաջ հաստատելու :

Այեր խորին չնորհակալութիւնը անկեղծաբար կը մասաւցանենք, Ասհմանադրութեան գործադիր յանձնաժողովը վոյ Մեծապատիւ անդամոց :

### ԹԱՏՐՈՆ

#### ԵՒ ԲԱՐՁԱԿԱՆՈՒԹՅԻՒՆ

Ժողովուրդի մը յառաջադիմութիւնը զվարաբար երեք տեսակ է, նիւթական՝ բարոյական և ուսումնական :

Մենք հս ձգենք Ա. և Բ. կէտերուն վրայ խօսիլը, այլ ձեռք առնենք միայն Գ. կէտը որ մեր բենութեան առաջրկան է :

Զգենք անդիր ժամանակները, բայց պատմութիւնները և այս նիւթին վրայ զբուած բազմահատոր և զանազան տեսակ հեղինակութիւնները բաւական մեծ լրյու կուտան մեզի որ ժողովուրդին բարոյականութիւնը հին փիլիսոփաներուն ուշադրութիւնը շատ գրաւած էր, և այն ժամանակի փիլիսոփայութիւնները ըստ մեծի մասին բարոյական էին. բայց որչափ որ ասսնակ էր, ու ալ ակն յայտնի է որ, որչափ որ ժողովուրդին բարոյականութիւնը ուղղելու համար զանազան և միշտ իրարմէ և մինչեւ բարոյականութեան բնութենէն տարբեր խորհելով զանազան միջոցներու ձեռնարկեցին, և փոխանակ քնականի յարմար պարզ՝ զըռուաճալ՝ որո՞չ գործնական և աղդում միջոցներ

բոյապէս և ֆիզիգապէս անզզ այացնող և մարդկային ընկերութեան հաւասարութեան սկզբանց ծայրահեղ միջոցներու դիմեցին. ասոնցմէ ժողովուրդը և ոչ մէկ օգուտ մը կրցաւ քաղել և չէր ալ կրնար քաղել, քանի որ այն դրութիւններն բացարձակապէս զինքը գէպ յանզգայութիւն կը տրամադրէին: Այս դրութեանց անմիջական արդիւնքը եղաւ շատ անդամ սոսկալի արիւն հեղութեանց և անբարեկարգութեան այն ահարկութեամբնելլը՝ որոնք գլխաւորաբար պատմութեանց ամենէն առաջին և շատ աեղերը կը բռնեն:

Մենք չենք ուղեր այն ժամանակի փիլիսոփանները դատապարտել թէ ինչո՞ւ ծուռ ու վասարակար սկզբունքներ ունեին. վասն զի շատ հաւանական է որ ապագային մէջ մեր ապագայ սերունդն ալ մեր արդի դրութիւններուն չհաւնի. ինդիրը հս չէ. բայց սա շատ իրաւացի է որ այն ժամանակի փիլիսոփայից դրութիւնները կարծեաց վրայ հիմնեալ էին, և առաջ անտարակուսնի է որ կարծեաց վրայ հիմնեալ դրութիւնները հաստատուն սկզբունքներ չեն. վասն զի հաստատուն ու ապացուցական հիմնաց վրայ հաստատուած չեն :

Հսել է որ ասանկ դրութիւններ՝ ուրնք շարունակ փոփոխութեանց ենթակայ՝ այսինքն հաստատուն ու ապացուցական հիմնաց վրայ հաստատուած չեն. ժողովուրդին բարոյական զարգացմանը համար օդասկար չեն. հետեւաբար անընդունելի են :

( Նորուականէլէ )

### ԱՂՄՈՒԿ ՄԷ ԹԱՏՐՈՒՄԻ ՄԵջ

Ապրիլ 27 իրիկունը Բերայի Արևելեան Հայկական թատրոնին մէջ ՚ի նըուաստ համազգային հիւանդանոցաց ներկայացում մը տրուելուն համար՝ հասա-



Հնչեն սիրոյ գայլայլենք,  
Արձագանք տան ձորերուն :  
Աղբ' որդիք հայկապնեան,  
Ուրափի, զըւարթ սիրտ պարզենք .  
Օրհնել ըշ Տէրն բնութեան,  
Մէր սիրան Անոր ընծայենք :  
Զայն տանք առ Տէրն և ուխտենք,  
Ըլսալ մէկ սիրտ միաբան .  
Եւ գարնան հետ նորոգենք,  
Մէր ջանքն ու սէր հայութեան :

Ա. Յ. Այլաղեան :

## Զ Ա Խ Ա Ր Ճ Ա Լ Ի Ւ Ք

Պ. Գը . Բարի իրիկուն Ա. աղա , ի՞նչ  
է ատ կարդացածդ :

Պ. Աը . Աստուծու բարին աղաս ,  
ախագար ասոր ժամին թուղթ մը խրկե-  
րեն ինծի , և մէջն ալ շատ մը մարդիկ-  
ներու անուններ կան . ասոնցմէ որոնք որ  
կը ճաշնասնէ , անոնց համար քուէ տուր  
ըսեր էն . քուէն ի՞նչ է ախագար , քիւ-  
ֆէ ըսե՞լ է :

Պ. Գը . Տուր նայիմ տա թուղթը . ա-  
սոնցմէ որո՞նք կը ճաշնաս :

Պ. Աը . Էյ իշտէ շատը կը ճաշնամ ,  
չիւնքի ասոնցմէ շատերուն հետ աղէկ կը  
տեսնուիմ . աւուր զաւուրին խաղուէն կը  
նստինք թուղթ կը խաղանք , և չինթօ-  
րինթօյին մէխանան ռախի կը խմենք  
մէկտեղ :

Պ. Գը . Շատ աղէկ ամա , ազգային  
գործերու ալ խելքերնին կը համարի մի՞ :

Պ. Աը . Օ , ատոր խօսք չկայ . աղէկ  
խարածիւմէ կընեն , մինչեւ սաղմոց կար-  
դացեր էն , և Օ. Հըզ — խարիսխն և Շահ  
— խմայէլին մասալերն ալ շատ աղէկ  
գիտեն .

Պ. Գը . Աղէկ ամա : . . . ասոնցմէ Ա .  
աղան ալ կը ճաշնաս :

Պ. Ա . Օ , շատ աղէկ կը ճաշնամ ,  
տուներնին կը մասամ կելլէմ , հեմ քիւր-  
քէրնին ալ ես կը չնեմ . եթ աղէկ վաս-  
տակ ալ ունիմ անկէ . իշտէ մէյմը անոր

անունը գրելու է . հիմա չգերեմ նէ  
խամթըլը պիտի մնայ :

Պ . Գը . Զէ ախագար ասիկայ գաղանի  
քուէ է , ան ի՞նչ զիտիէ որ գուն անոր  
անունը գրերէս չես գրէր . հէմ գաղանի  
քուէն ասոր համար եղած է որ , ուզած  
մարդուդ անունը թուղթի մը վըսյ գաղա-  
նի գրես , և տանիս քուէտուփը ձգես :

Պ . Ա . Էմէլ է որ ես ինչ գրեմնէ մարդ  
խագար չունի , իշտէ ատ աղէկ բան . ես  
ալ կըմունայի կոր քի հիմա կ . աղային  
անունը գրեմ , և Յ . աղային անունը չը  
գրեմ , Յ . աղային խամթըլը կը մնայ . ը-  
սելէ որ ուզածս կընամ գրել չըսէ՞ս :

Պ . Գը . Հա՞ , եա՞ , չիւնքիւ գաղանի  
քուէն ասոր համար եղած է . լաքին նա-  
յէ որ զրածներդ ազգասէր , հմուտ ,  
խելցի , բարի , և ազգին պատիւն ու  
շահէ իրենց անձնական պատիւն և շա-  
հէն վեր բռնող մարդիկներ ըլլան :

Պ . Աը . Շատ աղէկ աղաս , շատ չնոր  
հակալ եմ , որ ատոնք ինծի հասկցուցիր :

Պ . Գը . Զէ աղաս , չնորհակալու-  
թեան բան մը չիգայ հսու , իմ պարտքս  
կատարեցի միայն :

## ՄԵՌԵԱԼԻՆ ՀՈ.ՐԱՅ

Տես թիւ 45 :

— Զէի կընար մի յափշտակուիլ :

“ Աւրեմն կը սիրես զինքը :

— Ղեռ որոշում ըբած չէմ :

“ Վարպետ ես :

— Ոչ . քու կարծածիդ չափ :

“ Բայց սիրելի կոյս մէ այնողէս չէ .

— Ոչ խիստ գեղեցիկ խիստ անուշ :

“ Կուզե՞ս հետք ամսունանալ :

— Ոչ , մինչեւ որ չիտեսնուիմ իւր հե-

ար , և չստուգեմ որ նա ալ զիս կը սիրէ ,

կամ կընայ սիրել ” :

Փօխեց պարմը իւր կերպարանքը և

հանդարտութեամբ մը ոտքի ելելով ըստ, „իմ սիրելի Պարոնս զգուշացի՞ր ինքզինքէդ, և ալ ևս մի աշխատի՞ր Երգուհին տեսնելու, դու անոր հետ յարաքերութիւն մը չես կարող ունենալ, զիս ալ քու բարեկամի սեպէ՛ և Երբ կուզէս եկ ինձ հետ տեսնուէ՛, դու օտարական և պահտուխտ պատանի մին ես կըրանաս օր մը իմ բարեկամութիւնս վայեւել”:

“Մնաս բարեաւ „ըսի ոտքի ելելով“ Մնաս բարեաւ ազնուական պարոն, յուսամ թէ շուտով մէկզմէկ կը ճանշնամք” և առի գալեցի կատարելապէս միտքս դնելով օր ամեն բան մոռնամ բաց՚ի Երգուհին օրուն վրայ յիրաւի շատ սէր ունէի արդէն:

Հազիւ թէ երեք փողոցի անկիւն դարձեր էի ահաւասիկ Երգուհին սեւեր հագած առջևս ելաւ:

Թողներուիմ ես՝ հոս անկարող ըլլալուս ստորագրել այս միրկալից փոթորիկը օր կուրծքիս մէջ սկսաւ երբ մեկն իմէկ Երգուհին գէմը գտնուեցայ տեղիս պահանջածին համեմատ կանկ առի և ուղղակի սկսայ այն ազբերուն մէջ նայիլ որոնց սեւութիւնը, և խոշորութիւնը զինքը ամենէն համբաւաւոր կինային ընել անշուշտ ։ Երգուհին անտարբեր չէր այս միջոցիս այլ այն ալ ինձ նման քարացած կանգնած էր առջևս, և չէր զիսեր թէ ինչ ընթացքբանէ. բայց վերջապէս տեսնելով օր ես ոչ շարժելու կարողութիւն ունիմ և ոչ ալ խօսելու, մեռելատիպ ժայիտ մը ըրաւ, հառաջեց և անցաւ զընաց, և թողուց զիս իւր հառաջանքը կրկնելով Գլուխիոր իւր ետքէն երթալու և զարձեալ հրեշտակաց պարետզը մը տնելու ուր ինքն անմիջապէս խումբ մը ծառերուն մէջ մտնելով ինկառ նստարանի մը վրայ և ես հազիւ թէ օրոշեցի իրեն մտենալ, ահաւասիկ երկու տեսչութեամ զիս զիսուրք բռնելով զիս հեռա-

ցուցին պարտիզէն։ և քաղաքին մէկ կողմը գտնուած պարփակի մը մէջ բանտարկեցին :

Բանտոս փոքրիկ սենեակ մին էր ամեն կերպով զարդարեալ, անանկ օր առանձնութենէս իզատ ուրիշ տհաճութիւն մէջ չիտի զգայի թէ օր Երգուհին հանդապած ըլլայի օրուն վրայ սէրս սկսած էր աւելի սաստկանալ:

Հազիւ թէ իմ դեղեցիկ բանտիս մէջ կէս ժամ անցուցած էի, ահա դուռը բացուեցաւ և ներս մտաւ պարոն քաղաքակեալ օրն օր ամենայն հանդարտութեամբ մօտենալով ինձ ձեռքս բռնելով ըստ :

“Ի՞նչպէս ես՝ իմ փոքրիկ պարոնս, կը յուսամ թէ ըրած անխոհեմութիւնդ սկսար իմանալ”

— Անխոհեմութիւնն այսացի ոտքի ելելով “ի՞նչ անխոհեմութիւն”:

“Կամաց իմ տղաս, հոս բարկանալու պատճառ չունիս :

— Եւ ոչ ալ դու զիս հոս բանտարկել:

“Իրաւունք ունիս սակայն՝ դու ալ պարտիս խօսք տալ ինձ օր Երգուհին հետ յարաքերութիւն մը ունենալու չիտի աշխատիս :

— Պարտաւոր չէմ այդպիսի խառաւում մը ձեզ :

“Ուրեմն այս սենեակս կինայ քու բանտդ լինել մինչեւ որ . . .

— Մինչեւ օր ես քեզի յայտնեմ թէ Հայմն եմես, օր կինախատեմ չզքեզ . . .

“Զիս կինախատես . . . հահ . . . հահ:

— Պարոն ինդալու ուրիշ ժամանակ զնա՛ միտուէ՛, բայց հիմայ զիս պարտիս ազատ թողուլ:

— Թէ օր չի թողում:

— Այս գալոյնը կամ սա ատրճանակ կը կինան սահիպել զքեզ օր զիս թողում:

— Տեսակ մը կծու արհամար հանքով ըստ կառաւ վրաս նայիլ պարոնը լուութեամբ . . .

— շուտ ըրե՛ լ պարոն, գոչեցի ձայն:

բարձրացնելով, շուտ ըրէ՛ ընելիկդ պոշէ՛:  
“Ո՛չ որքան ծիծալը կը շարժես այդ  
կերպ խոսուածքովկ ։ բայց եկուը ես՝ կը  
սիրեմ քեզի պէս քաջասիրտ պատահի-  
ները, եկուը և իմ՝ պատուերս ընդդանէ,  
և ալ ես մի՛ հետեւիր Երգուհին :

— Երգուհին չի հետեւը համար  
պարտիմ մեռնիլ ես ու ըսի քիչ մը տիւ-  
քութեամբ :

(Ծարուհաչելէ)

## ԻԼՏԵԿՈՆՏԱ

ԹԱՏՐ ԵՐԳՈՒԹԻՒՆ

ԵՐԵԲ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ.

### ԱՆՁԻՆՔ

ՄԱՐԳԻԶ ՌՈՒԵՆՏԱ ԿՈՒՍԼՏԵՐԱՆՈ, ԽԼՈՒ-  
ԿՈՆՏԱԿԻՆ ՀԱՄՐԸ :

ԻԼՏԵԿՈՆՏԱ, Դուստր Մարդկողի :

ԹԻՑ ՅԱՐՏՈ :

ԿԱՍՏՈՆ տէ ՄԱՆՖՐԵՏԻ, Լուիցի առակետ :  
ԹԵՊԱԼՏՈ, ԽԼՈՒԿՈՆՏԱԿԻՆ ՓՈՔՐԻԿ որդին :  
ՈՒՊԱԼՏԵՄԵՆԵՆ ԹՕՃԻՔՐ Կոմս Խորթորդի  
Մարդկողին :

ԹՈՎԵՐԴՈ ԲԺԻՇԿ :

ԹԻԱՆՉԵՍԴԱ, ԵՐԿԵՍԻ բանտին պառաւ  
պահապանուհին :

ՎԱՐՈՅԱՆՈՐՆԵՐՈՒՆ ՀԱՐԻՌՈՎԵՏԸ  
ԿՈՒԱԼՏԵՔՐԻ, Թօճիկրո կոմսին ոպասաւորը :  
ՄԱՐԴԻԶԻՆ ՍՊԱՍԱՀՈՐԸ :

ԵՐԿՈՒ ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏՔ որ կը խօսին :

ՀԱՐՄ ՎԱՐՈՅԱՆՈՐ :      |  
ԵՐԿՈՒ ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏՔ :      |  
ԲԱՆՏԻՆ ՊԱՀԱՊԱՆԸ :

ԴԵԿՔԸ Երկուստաներորդ գարունէ :

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Կողմանկի գուներով սրահ մը, աթոռներով և  
սեղաններով զարդարուած, մէջ տեղը կախուած  
պիտի ըլայ փառաւոր նկար և պատկեր մը որ կը  
ներկոյացնէ աղնուական կնկան մը կենդանագիրը :

### ՏԵՌԱՐԱՆ Ա

ՄՊԱՍԱՌԱՐ մը աթոռները կը շահէ : Դերա-  
սաններուն ձախուն ներս կը մանէ ՔՕՊԵՐՈՒՅՆ :

ԻՕՊ. Մարդկողին իմացուցեք որ իոր  
ողջկանը, Խլուկիստայի բժիշին եկած  
է իւր հրամանին կ'սպասէ :

ՍՊԱ. Հիմա պարո՞ն (Քերասաններուա-  
նչ հոգի սենեալէ իւ նոնէ : )

ԻՕՊ. Ի՞նչ լուութիւն : Այս տունը  
հոչակաւոր կուալտէրանիներուն, Խլ-  
ուանի ան երեւելի եւ հզօր գերդաստա-  
նին պալատնէ : թէ արտօմութեան եւ  
սգոյ տուն մը : Տարաբախա Խլուկոն-  
տայի կեցած մութ բանուէն, ի՞նչ տար-  
բերութիւն ունի : Ո՛հ, թշուա՛ռ կին :  
Երանի՛ թէ հօրդ յամառ բարկութիւնն  
իջեցնելու կարող ըլլայի : բայց կ'երին-  
չիմ, ով վաստակրութիւն, վրէժինդ-  
րութիւն, ով դաժան կիզբեր որ մարդ-  
կային սիրալ գերի ըրած էք, ի՞նչ սոս-  
կալի չարիքներու պատճառ կ'ըլլաք :

### ՏԵՄՈՒՆ Բ

ՄՊԱՍԱՌԱՐ որ ՄԱՐԳԻԶԻ առաջ կուգայ,  
ՄԱՐԳԻԶ և ԻՕՊԵՐՈՒՅՆ :

ՍՊԱ. Տէրս կուգայ :

ԻՕՊ. Տէր ... (իւ խոնարհէ)

ՄԱՐ. Տիսոր վիճակիս ներէ ... քան-  
զի քեզ կանչել տուի :

ԻՕՊ. Հնազանդելու պարտաւոր եմ  
Տէր :

ՄԱՐ. (Եշան հըն Սպասաւորին որ ԵՇԻՆ-  
ալուա տայ, ու Ետու ԵՇԻՆ) Ելուակ զրուցէ,  
աղջկանս առողջութիւնն ի՞նչպէս է :  
(ԵՇԻՆ ալ իւ նուախին)

ԻՕՊ. Վասնդն անցաւ, տենդը թո-  
ղոց, եւ ութ որ է որ անկողինէն ելած է :

ՄԱՐ. Զառանցանիքն ու Երկիւզալի  
կրազները տակաւին կը շարտնակե՞ն :

ԻՕՊ. Այս մեծաւ մասամբ, Երազին  
մէջ ատեն ատեն մօրն ու մեռնող ամուս-  
նուին ուրուականը տեմնել կ'կարծէ : իր

տիւր երեւակայութիւնը ասանել տեսչ  
իներով՝ այնպէս պաշարուած է, որ եւ  
բաղը ճշմարտութեան տեղ կ'առնէ, եւ  
ինչոր կը սենք չենք կը նար համոզել զինքը:

ՄԱՅ. ԱՇ :

ՌՕՊ. ԱՇ գիշերուան՝ տաենները,  
շատ անդամ զինուորական հադուստով  
մէկը՝ կ'երեւայ, եւ ոզբոդին երգերով  
հիւանդն տեղի կը խուզիէ: Այդ զին-  
ազրականը կ'ուզայ կը կայնի բարձր  
տեղուց մը վրայ, որ Խլտէկոնտայի բը-  
նակած, երկամթափառ սենեկին պա-  
տուհաններէն կը տեսնուի: Խլտէկոն-  
տա լրամին լրամով կը տեսնէ, զինուո-  
րականը եւ կ'ըսէ թէ, Ծիցցարացին կը-  
նամնի, վախէն միանդամային եւ որս-  
խութենէն խուզած կ'ակսի պոռալ:  
Բանտին պահապան պառաւ կինը . ծեր  
Ֆիքանչեստա . իսկոյն կը վազէ . արդար  
եւ մայրական ինսամքով կը հոգայ զինքն  
ու միխմարել կը ջանայ:

ՄԱՅ. ԱՎ է այն մարդը:

ՌՕՊ. Որովհետեւ բանտարկելոց շա-  
տերը սիրահարութեան համար բռնուած  
եւ հոն գրուած են, կ'երեւայ թէ այն  
զինուորն ալ բանտարկեալ կանանց մէ-  
կուն սիրականն է, որ իր ոզբազին ձայ-  
նովը սրտին ցաւը սիրուհւոյն յայտնել  
կուտայ, բայց քանի մը օր կայ որ եկած  
չանի. եւ որովհետեւ աղջիկը հիմա այն  
երկու ստորերկերեայ սենեակներուն մէջ  
կը բնակի. զնոս գուք իմ տուած խոր-  
հրդիս համեմատ բանտին մէջ շինել տը-  
ռեիք. այնպէս կը յուսումն որ այսուհե-  
տեւ իր սրտին խուզութիւնը քիչ մը հան-  
գարտութիւն պիտի դոնէ:

ՄԱՅ. Անեւակներուն շինութիւնը  
լիցար:

ՌՕՊ. Այժ', եւ այսօր արհեստաւոր  
ներուն գլխաւորները իրենց աշխատու-  
թեանը վարձը քեղմէ ինսդրել պիտի  
զայ:

ՄԱՅ. Զանոնը ևս կանչել տուի, բա-

րեկամ, քիչ մը մխիթարուելու համար  
ճամբորդութիւն մը պիտի ընեմ. վազը  
Միլանէն պիտի եղեմ: զիլտէկոնտաքու-  
թինամոցդ կը յանձնեմ: Զինքը մխիթա-  
րէ, ինսամէ, քաղին մի՛ հեռանարի. եւ  
ապահով եղիր, որ փախարէնը կը հասու-  
ցանեմ:

ՌՕՊ. Զինքը հանդարտ տեսնելու ինչ  
ծի բաւական հապացումէ: Եւ կը յու-  
սամ թէ ՚ի դարձին քեղի աւելի ուրա-  
խալի լուրել կը նամ տալ:

ՄԱՅ. Ե՞ս, մի՛, յուսար . . . ո՛վ աւ  
նողորմ, ճակատագիր գուն՝ ինծի այս-  
պէս անդմութեամի իմ միաւոր գուստ-  
րըս կրպանցել տուիր:

ՌՕՊ. Բայց այնչափ յանձաւո՞ր է ինք  
որ քեղմէ ներում յուսալու իրաւոնքը  
չոնենայ:

ՄԱՅ. Աւելենն չես գիտեր որ . . . :

ՌՕՊ. Լամձ եմ . . . :

ՄԱՅ. Ի՞նչ լսած ես:

ՌՕՊ. Լամձեմ թէ Խլտէկոնտա ծա-  
նըր յանձանաց ներքեւ կը դանուի:  
Բայց . . . :

ՄԱՅ. Առաջ տար . . . :

ՌՕՊ. Բայց ոմանք ալ, քեղի համար  
անողոքելի է կըսեն:

ՄԱՅ. Գիտեմ, գիտեմ: Բայց եթէ  
ճշմարփու գիտնային . . . :

ՌՕՊ. Արդեօք, կընամ համարձա-  
կիւմադրելու որ . . . :

ՄԱՅ. Այս թշուառ պատմութեան  
սկզբնաւորութիւնը :

ՌՕՊ. Այժ' եթէ չըս բարկանար: . . . :

ՄԱՅ. Քու բարեկուսութիւնդ, լս-  
գիտեմ, անոր համար այս դաշտնիքը  
քեզի կը յայտնեմ. ուստի համառօտիւ-  
մոփիկ ըրէ: Քանալինդ տարեկան էի,

երբ Աւելուրձիէրի ընտանիքէն Մակմակ  
տա անուն առաքինի օրովրդին սիրահա-  
րեցայ, ահա կենդանագիրը: (Համա-  
շելով կենդանագիրը կը ցցնէ .) զդա-  
ցած համակրութիւնս հօրու յայտնեցի:

դէմ կեցաւ . վերջապէս չայրս զիս  
բերդի մը մէջ բանտարկեց , ուստի ան-  
կէ չկրցայ ելլեւ . բայց եթէ երդում ը-  
նելով որ Ալպա Ռէպալաէսքի կոմին  
այրի կինը ինձ ամուսին առնեմ . Ալպա  
տիկինը աղնուական ընտանիքէս էր ,  
բայց եր հարստութեամբը աղքատ Բըու-  
նի խորանին առջեւը գացի , ու խրոխտ  
կուջ մը ամուսինն եղայ . Ալպա իւրառո-  
ջի ամուսինէն Բօճիէրօ անուն արու-  
տղա մը ունէր որ մինչեւ ցայսօր հետո  
է : Կնոջ հետ հինդ տարի ապրելէ եւ-  
քը մահը աս առջի ամուսինս յանկարծ-  
մահկանացուաց մէջէն յափշտակեց , ես  
ալ . . . կը խոստովանիմ թէ անորմահ-  
ուանը փրայ շատ չցաւեցայ : Գրեթէ  
մի եւ նոյն ժամանակը հայրս ալ մեռաւ ,  
որով ամէն ակնածութենէ աղատ ըլլա-  
լով , Մաթիլտէին ոռքը դիմեցի որ միշտ  
ինծի հաւատարիմ մնալով և ամուսնա-  
նալ չէր ողած , թէպէտ շատ երեւելի  
ամձինք զինքն ուղած էին , ուստի ան-  
պատմելի ուրախութեամբու փոխադարձ  
հաճութեամբ ամուսնացանք : Տարի մը  
ետքը իլուկոնու աշխարհ եկաւ : Աղ-  
պի բարեկամ , դու ալ ամուսնոյ եւ զա-  
կաց տէր ես մոտածէ մնդամ մը թէ , ինչ  
մեծ էր իմ երջանկութիւնս , սիրելի ա-  
մուսին մը քովս , եւ սիրուն զաւակ  
մը որ մեր երկուքին սիրսն դրաւականն  
էր , զաւակ մը որ . . . ո՞վ Աստուած :  
Ասոնք յիշելով արտասուաց հեղեղներ  
աշուշներէս կը վաղեն եւ ինքնինքս չեմ  
կրնար բանել Այս երջանկութիւնը տանի  
եւ ութը տարի վայելեցի : Իլուէկանուա  
գեղեցկութեամբ ու առաքինութեամբ  
աճելով կը մեծնար : Բայց առջի ամուս-  
նոյս տղան Բօճիէրօն ով՝ պահեցի ու կը  
խնամէի , որ թէպէտ հօրմէն հարստու-  
թիւն չ'ուեսաւ , բայց աղնուականու-  
թեան մեծ տիտղոս մը ժառանգելով ,  
իմ բարելարութեանս աղաւինած էր :

Այս առենները կոմպարտեան կոչուած  
ահաւոր գաշնակցութեան ու սոսկալի  
Պարպարասապային եղբօրորդւոյն Ֆրէտէ-  
րիկոս երկրորդին մէջ տեղը սասափի  
կուիւ մը ծագեցաւ . Հռոմ գժտութիւնը  
խաղաղելու միջնորդ եղաւ : Ես ալ այս  
մեծ գործը կատարելու համար Վիլանի  
կողմէն երեւափասան ընտրուեցայ եւ Քօ-  
ճիէրօն հետոս առիւ Ամուսինս իմ հեռա-  
ւորութեանս վրայ արտմելով դուսորը  
կ'առնէ , եւ մօրաքեռը քով Լոտի կ'եր-  
թայ : Օ՛հ , երանի թէ հոս վերջանար  
այս գառն պատմութիւնը , թըշուա-  
ռութեանս ամենէն սոսկալի մասը հի-  
մա պիտի յայտնեմ :

(Շաբանակէլէ)

### Ծ Ա Ն Ռ Ի Ց Ա Խ Մ

### ՄԱՏԵՆԱԳՄԱՆ ԺՈՂՈՎՐԴԵՍՆ :

ՀԱՏՈՐ Ա .

Օդակար խօսակցութիւնք :

Ընտանեաց կառավարութեան վերա-  
բերեալ :

Աշխատակիրեաց

Խաչատրակակ Կոթիւճեան

• Տ ա կ ա լ Կ ա ռ Պ օ լ ի ս

Այս օդակար գրքոյիը կը ծախուի  
գաշըքնը խան թիւ 4 . գ . Ընկերու-  
թեան սենեակը գին 2 զրոշ :

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ

ՄԻՆԱՍ Մ ՀԱՅԿ ԳՍՓԱՄՄՃԵԱՄՆ  
ԵՒ

ՏՆՈՒԿՆՈՒԹԵԱՄԲ

Գ ԲՈՐԹՈՒԲԱԱԵԱԽ

Ա ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՑՊԱՐԱՆ  
Կ ՊՈՂԻՍ ԻՄԱՄ - ԱՍԻԻ ԽՋԵ